

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 16.04.2021թ. թիվ 2112584445 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 17 >> 05 2021թ. 7-13- 7989

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Վարդազար Պետրոսյանի ՄԴ/40161-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ամառանոցային 2-րդ տարածքի 44-րդ տան բնակիչ Վարդազար Պետրոսյանը դիմումով խնդրել է վերանայել վարչական տույժ նշանակելու մասին 16.04.2021թ. թիվ 2112584445 որոշումը՝ նշելով, որ խնդիր է առաջացել ավտոմոբիլի արգելակման համակարգի հետ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 16.04.2021թ. թիվ 2112584445 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալը, եթե դա կապված չէ վազանցը թույլատրված տեղերում վազանց կատարելու կամ կանգնած տրանսպորտային միջոցը կամ խոչընդոտը շրջանցելու հետ, և եթե առանց հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալու անհնար է շրջանցել կանգնած տրանսպորտային միջոցը կամ խոչընդոտը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ ահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 3 միավոր:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 16.04.2021թ. թիվ 2112584445 որոշման հիմքում դրված տեսանյութերի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությամբ պարզվել է, որ դիմումատուի կողմից շահագործվող տրանսպորտային միջոցը 01.04.2021թ. ժամը 11:20-ին Երևան քաղաքի Դավիթ Բեկ - Հ.Ավետիսյան փողոցների խաչմերուկի հատվածում դուրս է եկել հանդիպակաց երթևեկության գոտի, որը կապված չէ վազանցը թույլատրված տեղերում վազանց կատարելու հետ:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ կառավարության «Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին» 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ շրջադարձը պետք է իրականացվի այնպես, որպեսզի երթևեկելի մասերի փոխհատումից դուրս գալիս տրանսպորտային միջոցը չհայտնվի երթևեկության հանդիպակաց կողմում:

Ինչ վերաբերվում է դիմումատուի այն պնդմանը, որ խնդիր է առաջացել ավտոմոբիլի արգելակման համակարգի հետ, ապա այն արժանահավատ համարել հնարավոր չէ, քանի որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 23.04.2021թ. թիվ 2112619105 որոշմամբ արձանագրված իրավախախտումն ամրագրած տեսանյութից պարզ երևում է, որ վարորդն անարգել կարողանում է արգելակել, ինչպես նաև դրվագներով ավտոմոբիլը գտնվում է անշարժ վիճակում, ուստի արգելակման խնդիր լինելու դեպքում դիմումատուն կարող էր անշարժ վիճակից այլևս չշահագործել ավտոմոբիլը:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 18-րդ մասի զանցակազմը, հետևաբար նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 16.04.2021թ. թիվ 2112584445 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Վարդազար Պետրոսյանին:



Ե.Կարապետյան